



ԵՐԵՎԱՆ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ «ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ
ԶԵԿՈՒՅՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
«ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ.....3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ «ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ»
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ4
«ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎՋԵԲ-Ի
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ.....5
ԵՐԵՎԱՆ
ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ-
«ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ» ԲԱՂԱԴՐԻԶ.....6
Եզրակացություն.....13
ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ - «ԹԱՓՈՆՆԵՐ»
ԲԱՂԱԴՐԻԶ.....14
Եզրակացություն.....16
ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ -ՋՈՒՐ.....16
Եզրակացություն.....
ԳՅՈՒՄՐԻ
ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ-
ՕԴԻ ՈՐԱԿ և ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ.....21
Եզրակացություն.....23
ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ-
ԿԱՆԱԶ ՏԱՐԱԾՔՆԵՐ, ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ և ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐ.....23
Եզրակացություն.....24
ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ-
ՋՈՒՐ.....24
Եզրակացություն.....27
ԳՅՈՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԵՐԸ ԿՔԳԾ-ՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
2020-2025ԹԹ. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....27

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՀԿ - Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ԱՆԳԾ - Արտահոսքի նվազեցման գործողությունների ծրագիր

ԱՏՀ - Աշխարհագրական տեղեկատվական համակարգ

ԵՄ – Եվրոպական միություն

ԵՔ – Երևանի քաղաքապետարան

ԻԺՈՒՏ - իրական ժամանակում ուղևորահոսքի տեղեկատվություն

ԿՔԳԾ - «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր

ՀՈԱԿ - Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

ՎԶԵԲ - Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

ՊՈԱԿ - պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՔԿԿԹ - Քաղաքային կոշտ կենցաղային թափոններ

USAID – Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն «Գլոբալ Գրինգրանտ» հիմնադրամի աջակցությամբ իրականացրել է «ՎԶԵԲ-ի և Երևանի և Գյումրիի քաղաքապետարանների պատասխանատվությունը «Կանաչ քաղաք» ծրագրի շրջանակներում» ծրագիրը, որի շրջանակներում մշտադիտարկել է Երևան և Գյումրի քաղաքների «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրերի իրականացումը: Երևանի և Գյումրիի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրերը մշակվել են ՎԶԵԲ-ի «Կանաչ քաղաք» ծրագրի շրջանակներում:

Զեկույցի պատրաստման համար ուսումնասիրվել են Երևանի և Գյումրիի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրերը, համացանցում առկա բաց տեղեկատվությունը, Երևանի, Գյումրիի քաղաքապետարանի, ՎԶԵԲ-ի, ԵՆԲ-ի պաշտոնական կայքերը, զարգացման ծրագրերը: Իրականացվել է նամակագրություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Գյումրու քաղաքապետարանի հետ, «Էկոլուր» մամուլի ակումբում կազմակերպվել է քննարկում Երևանի կանաչ քաղաք գործողությունների ծրագրի վերաբերյալ, հանդիպում է անցկացվել Գյումրիի դաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

«ԿԱՆԱՇ ՔԱՂԱՔ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ՎԶԵԲ-ի «Կանաչ քաղաք» ծրագիրը նախաձեռնվել է 2016 թվականին: Այն միտված է Բանկի գործունեության բոլոր երկրների քաղաքներում նպաստելու կանաչ տնտեսության անցմանը: «Կանաչ քաղաքներ» ծրագրի նպատակն է.

1. Պահպանել բնապահպանական ակտիվների որակը (օդ, ջուր, հող և կենսաբազմազանություն) և օգտագործել այդ ռեսուրսները կայուն կերպով:
2. Մեղմել և հարմարվել կլիմայի փոփոխության ռիսկերին:
3. Ապահովել, որ բնապահպանական քաղաքականությունը և զարգացումները նպաստեն բնակիչների սոցիալական և տնտեսական բարեկեցությանը:

Ծրագիրն ունի հետևյալ բաղադրիչները՝

1. Կանաչ քաղաք գործողությունների՝ ծրագիր: Այն գնահատում է բնապահպանական մարտահրավերները և առաջնահերթությունները, մշակում գործողությունների ծրագիր այդ մարտահրավերներին դիմակայելու համար:
2. Կայուն ենթակառուցվածքային ներդրումներ: Ներդրումները միտված են դյուրացնելու և խթանելու հանրային կամ մասնավոր կանաչ ներդրումները ջրի և կեղտաջրերի, քաղաքային տրանսպորտի, էներգիայի, շենքերի էներգաարդյունավետության, կոշտ թափոնների և այլ ոլորտներում, բարելավելու կլիմայի փոփոխության նկատմամբ քաղաքի հարմարվողականությունը և կլիմայական ցնցումներին դիմադրողականությունը:

3. Կարողությունների զարգացում: Այս բաղադրիչը միտված է քաղաքային ղեկավարությանը և տեղական շահագրգիռ կողմերին տեխնիկական աջակցություն տրամադրել՝ ապահովելու, որ ենթակառուցվածքային ներդրումները և «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրում նշված քաղաքականության միջոցառումները արդյունավետ մշակվեն, իրականացվեն և վերահսկվեն:

Ծրագիրն իրականացնում են տարբեր մարմիններ, տարբեր ֆինանսական ինստիտուտներ:

«Կանաչ քաղաքներ» շրջանակային ծրագրի (GrCF, 48171) համար հաստատված ընդհանուր դրամագլուխը 2016թ. կազմել է 250 միլիոն եվրո՝ հինգ տարի սպասվող տևողության համար: Նախատեսված էր Ծրագրի կենտրոնացում առաջին հերթին Կովկասում, Մոլդովայում և Բելառուսում, հետագայում՝ Արևմտյան Բալկաններում: Հատկացվող վարկերը նախատեսված են եղել կառավարությունների, քաղաքապետարանների, համայնքային սեփականություն հանդիսացող կոմունալ ընկերությունների և քաղաքային ծառայություններ մատուցող ընկերությունների համար:

Կանաչ քաղաքներ շրջանակային ծրագրի արագ իրականացման շնորհիվ 2018 թ. ներկայացվել է Կանաչ քաղաքներ շրջանակային ծրագիր 2 շրջանակը (GrCF2, 50440 և 50674) 700 միլիոն եվրոյի նախատեսվող դրամագլխով հաջորդ հինգ տարիների համար: Այն նախատեսվել է քաղաքային ենթակառուցվածքներում ներդրումների՝ միաժամանակ կլիմայի փոփոխության և բնապահպանական մարտահրավերների հաղթահարման համար: GrCF2 դրամագլուխը 2020 թվականի հոկտեմբերին ավելացվել է՝ հասնելով 950 միլիոն եվրոյի: 2021 թվականի նոյեմբերին GrCF2 պատուհան II-ի (53170) նորացումը հաստատվել է 2 միլիարդ եվրոյի դրամագլխով¹: Արդեն ՎՁԵԲ-ը հայտարարում է ընդհանուր 5 միլիարդ եվրոյի դրամագլխի, 50-ից ավելի քաղաքների «Կանաչ քաղաք» ծրագրին միանալու, 22 «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրերի հաստատման, 83 նախագծերի իրականացման մասին²:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ (ԿՔԳԾ)

Երևան քաղաքի Կանաչ քաղաք գործողությունների ծրագիր

«Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի մաս են կազմում Երևան և Գյումրի քաղաքները:

Երևան քաղաքի ԿՔԳԾ նախագիծը մշակել է «Էրնսթ ընդ Յանգ» ընկերության և գործընկեր կազմակերպությունների թիմը: ԿՔԳԾ-ի մշակումը ֆինանսավորվել է Չեխիայի կառավարության Պաշտոնական զարգացման աջակցության Տեխնիկական համագործակցության հիմնադրամի կողմից՝ ՎՁԵԲ-ի «Կանաչ տնտեսության քաղաքականության» երկխոսության շրջանակի միջոցով: Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը հաստատվել է Երևան քաղաքի ավագանու 12.09.2017թ.

¹ ՎՁԵԲ-ի 2022թ. մարտի ««Կանաչ քաղաքներ» ծրագրի միջանկյալ գնահատում» փաստաթուղթ

² <https://www.ebrdgreencities.com/>

h.21-Ա որոշմամբ³: Երևանի ԿՔԳԾ-ն⁴ մինչև 2030թ. իրականացվելիք կանաչ գործողությունների ռազմավարական փաստաթուղթ է՝ կառուցված «տեսլական - ռազմավարական նպատակներ - միջնաժամկետ թիրախներ» առանցքի շուրջ, որոնք հավելվել են նաև կարճաժամկետ գործողություններով (հաջորդ 3-5 տարիների համար): Ծրագրի նպատակն է խթանել Երևան քաղաքի տնտեսական և սոցիալական աճը, մեղմել շրջակա միջավայրի վրա մարդու գործունեության բացասական ազդեցությունը, բարձրացնել Երևան քաղաքի բնապահպանական ակտիվների որակը՝ որպես հետևանք երաշխավորելով բնակիչների կյանքի որակի բարելավումը:

«Կանաչ քաղաքի գործողությունների ծրագիր Գյումրի քաղաքի համար» ծրագիր

«Կանաչ քաղաքի գործողությունների ծրագիր Գյումրի քաղաքի համար» ծրագրի⁵ մշակումը ֆինանսավորել է ՎՋԵԲ-ի շահառուների հատուկ հիմնադրամը (SSF): Այն մշակել է «Ատկինս», «Էյչ-Սի-Էլ Քոնսալթինգ» և Էլ-Դի-Քեյ (Atkins Acuity, HCL Consulting և LDK) ընկերությունների միջազգային փորձագիտական խումբը: Ծրագիրը հաստատվել է Գյումրի համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 20-ի «Կանաչ քաղաք գործողությունների ծրագիր»-ը հաստատելու մասին» N 232-Ա որոշմամբ: ԿՔԳԾ-ն ռազմավարական փաստաթուղթ է, որը ներկայացնում է Գյումրու՝ 2035 թվականի բնապահպանական տեսլականը: Փաստաթղթի նպատակն է բարելավել քաղաքի բնապահպանական կատարողականը ծախսարդյունավետ և ֆինանսապես կայուն եղանակով՝ միաժամանակ փորձելով առավելագույնի հասցնել լրացուցիչ տնտեսական և սոցիալական օգուտները: Գյումրու ԿՔԳԾ-ի տեսլականն է. «Առողջացնել Գյումրի քաղաքի շրջակա միջավայրը և այն դարձնել առավել հարմար քաղաքացիների բնակության համար՝ օդի որակի, ջրային ռեսուրսների և հողօգտագործման բարելավման, էկոհամակարգերի պահպանման և կլիմայի փոփոխության հետևանքների մեղմման և հարմարողականության միջոցով: Գյումրու ԿՔԳԾ-ի տեսլականն իրականացնելու համար ժամկետ է սահմանվել 2030-2035թթ.:

«ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎՋԵԲ-Ի ՏԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐԿԱՑԻՆ ԾՐԱԳՐԵՐ

«Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի շրջանակներում ՎՋԵԲ-ը ֆինանսավորել է չորս վարկային ծրագիր: Դրանք են՝

1. 2016թ. - «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագիր, որի համար ՎՋԵԲ-ը տրամադրել է 14,6 միլիոն եվրոյի սուվերեն վարկ Հայաստանին: Ծրագրի ընդհանուր արժեքը 21.9 միլիոն եվրո է: 2024թ. հունիսի 26-ին Գյումրի համայնքի ավագանին N 159-Ա որոշմամբ⁶ հաստատվել է Գյումրի համայնքին ՎՋԵԲ միջոցով «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի շրջանակում տրամադրվող տեխնիկական աջակցության դրամաշնորհի համաձայնագիրը: ՎՋԵԲ-ը ծրագիրն իրականացնող խմբին ցուցաբերվող աջակցության

³ <https://www.yerevan.am/hy/elders-decisions/21-a/>

⁴ <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/82/a1fb05c6c1ce38ca1807b35d07ada8789e7fd871.pdf>

⁵ https://ebrdgreencities.com/assets/Uploads/PDF/Gyumri-GCAP_Arm.pdf

⁶ <https://www.gyumricity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=53633dc8-1763-4d1f-a267-3bc7452b0ba8>

ճառայությունների ձեռքբերման նպատակով տրամադրել է 750 հազար եվրոյի չափով տեխնիկական համագործակցության դրամաշնորհ: Ծրագրի վարկային և դրամաշնորհային միջոցները նպատակաուղղվելու են Գյումրի քաղաքի Անի և Ավստրիական թաղամասերի փողոցային ցանցի հիմնանորոգմանն ու միննույն թաղամասերի, ինչպես նաև Անի թաղամասը քաղաքին կապող Շիրակացի փողոցի արտաքին լուսավորության արդիականացմանը:

2. 2017թ. - «ՀԷՑ - Բաշխիչ ցանցի արդիականացում», որի համար ՎԶԵԲ-ը տրամադրել է 80 միլիոն դոլար վարկ: Ծրագրի ընդհանուր արժեքը 200 միլիոն դոլար է:
3. 2021թ. - «Հայկական էլեկտրական ցանցեր»-ի ներդրումային ծրագիր (GrCF2 W2 - ENA Investment Program), որի համար ՎԶԵԲ-ը տրամադրել է 60 միլիոն դոլար վարկ: Ծրագրի ընդհանուր արժեքը 148,400,000.00 ԱՄՆ դոլար է, ներառյալ մինչև 20,000,000 ԱՄՆ դոլար սինդիկացված:
4. 2021թ. - «Երևան ավտոբուս նախագիծ» (GrCF2 W2 - Yerevan Bus Project), որի համար ՎԶԵԲ-ը տրամադրել է 20 միլիոն եվրո Երևանի քաղաքապետարանին: Ծրագրի ընդհանուր արժեքը 25 միլիոն եվրո է:

ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - «ՄԹՆՈՂՈՐՏԱՅԻՆ ՕՂ» ԲԱՂԱՂԻԶ

Երևանի «Կանաչ քաղաք գործողությունների ծրագրի միջնաժամկետ թիրախներն (2022թ.) են.

- Մինչև 2022թ-ը աղտոտման բոլոր ազգային պարտադիր մակարդակները (արտահայտված սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներով) բավարարված կլինեն և կհամապատասխանեն ԵՄ սահմանաչափերին:
- ԵՔ-ն ստեղծած կլինի Երևանի օդի աղտոտման ինտեգրված մոդել, որը հիմնված կլինի ներկա օդերևութաբանական տվյալների և անշարժ ու շարժական աղբյուրներից արտանետումների տվյալների վրա, ստուգված մշտադիտարկման տվյալների հետ և, որը կստեղծի օդի աղտոտման ինտերակտիվ առցանց քարտեզ
- ԵՔ-ն սահմանած կլինի աղտոտիչների ինքնամշտադիտարկման տվյալների կանոնավոր ստացման մեխանիզմ: (Ձեռնարկությունների կողմից արտանետումների արժեքների ինքնահաղորդումը կսահմանվի կարճաժամկետ ժամանակահատվածների համար, օրինակ, 10 կամ 20 րոպեի արժեքների համար՝ այնպես, որ դրանք հնարավոր լինի համեմատել առավելագույն թույլատրելի արտանետումների կամ ԵՄ/ ԱՀԿ արժեքների հետ): Երևանը կունենա օդի աղտոտվածության մշտադիտարկման հուսալի անշարժ/ շարժական համակարգ:
- ԵՔ-ն մշակած կլինի իր երկրորդ ԿՔԳԾ-ն՝ ներառյալ օդի աղտոտման կրճատմանն ուղղված գործողությունները:

Երևանի մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են շինարարությունը, տրանսպորտը, հանքարդյունաբերությունը, դեգրադացված հողատարածքները, Նուբարաշենի աղբավայրը, արտադրությունները, էներգետիկան:

Ըստ Երևանի 2023թ. զարգացման ծրագրի՝ Երևան քաղաքում հաշվառված է մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցություն առաջացնող շուրջ 400 կազմակերպություն:

Շինարարություն

Երևանի քաղաքապետարանի հրապարակած տվյալների վերլուծությունը փաստում է, որ մայրաքաղաքում շինարարությունը մեծ թափ հավաքեց 2018թ-ից հետո:


2023թ-ին տրամադրվել է 4448 շինթույլտվություն, 599 ավարտական ակտ, 2023 նախագծման թույլտվություն:

2022թ-ին տրամադրվել է 4014 շինթույլտվություն, 591 ավարտական ակտ, 2173 նախագծման թույլտվություն

2021 թ-ին տրամադրվել է 3044 շինթույլտվություն, 529 ավարտական ակտ, 1863 նախագծման թույլտվություն

2020 թ-ին տրամադրվել է 2964 շինթույլտվություն, 374 ավարտական ակտ, 1600 նախագծման թույլտվություն

2019 թ. տրամադրվել է 2612 շինթույլտվություն, 497 ավարտական ակտ, 1853 նախագծման թույլտվություն



Նկար 1. 2014-2023թթ. թույլտվությունների տվյալները՝ Երևանի քաղաքապետարանի պատրաստած գրաֆիկում⁷

Գրաֆիկից երևում է, որ շինթույլտվությունների աճին զուգահեռ չի աճել ավարտական ակտերի քանակը: Մա վկայում է շինթույլտվությունների տրամադրման և կատարման խնդիրների մասին: Շինարարության ծավալների մեծացմանը զուգահեռ ավելացել է Երևանում մթնոլորտային օդի՝ փոշո՛վ աղտոտվածությունը:

Այս ոլորտից փոշու արտանետումների նվազեցման համար Երևան քաղաքի ավագանին 2023թ. հունիսի 27-ի N 815-Ն որոշմամբ⁸ հաստատեց, որ շենքերի և շինությունների կառուցման աշխատանքների ընթացքում կառուցապատողը պետք է կազմակերպի շենքերը և շինությունները շինարարությանը համապատասխան բարձրությամբ 180 գրամ/քմ խտությամբ ցանցով ծածկումը, շինարարական հրապարակի տարածքում պետք է ապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրումն՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ: Մայրաքաղաքում մեր դիտարկումները ցույց են տալիս, որ ոչ բոլոր կառուցապատողներն են պատշաճ կատարում այս պահանջները:



Նկար 2. Շինարարություն Երևանի կենտրոնում առանց ծածկի:

Տրանսպորտ

⁷ <https://www.yerevan.am/hy/quarterly-statistics/>
⁸ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=180122>

Ըստ Երևանի 2023թ.գարգացման ծրագրի՝ Երևան քաղաքում շարունակաբար ավելացող տրանսպորտային միջոցների թիվը կազմում է շուրջ 600 000:

Տրանսպորտն օդի աղտոտման խոշոր աղբյուր է: Երևանի քաղաքապետարանը ձգտում է դիզելային վառելիքով աշխատող տրանսպորտը փոխել կապույտ վառելիքով աշխատող տրանսպորտի: Ըստ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ Վարդգես Պապյանի՝ դիզելային տրանսպորտը 140 միավոր է, իսկ կապույտ վառելիքով տրանսպորտը՝ 490: «Ստանալու ենք նոր խմբաքանակ՝ 171 ավտոբուս, որն օգնելու է փոխարինել հին ավտոբուսները: Մեր նպատակն է ամբողջությամբ անցնել կապույտ վառելիքի, որը նվազեցնում է օդի աղտոտվածությունը», - ասաց նա:⁹

Երևանի կենտրոնի բեռնաթափման, դրանով պայմանավորված մթնոլորտային օդի աղտոտման նվազման համար իրականացվում է Երևանի կենտրոնի բեռնաթափմանն ուղղված համալիր ծրագիրը, որի շրջանակում 2023թ. նոյեմբերի 13-ից Խանջյանից մինչև Սարյան և Գրիգոր Լուսավորչից մինչև Կորյուն հատվածներում, որը ներառում է շուրջ 40 փողոց և պողոտա, արգելվել է երթևեկությունը՝ առավելագույն զանգվածը 2.5 տոննա բեռնատարների համար: Սահմանափակումները գործում են առավոտյան ժամը 07:00-ից մինչև 21:00-ն¹⁰:

Երևանի ավագանու 2023թ. դեկտեմբերի 26-ի 43-Ն որոշմամբ¹¹ բարձրացվել են ավտոկայանատեղիների վարձավճարները: Նպատակներից էր բարձր վարձավճարի շնորհիվ Կենտրոն վարչական շրջանի բեռնաթափումը, մթնոլորտային օդի աղտոտվածության մեղմումը:

Հանքարդյունաբերություն

Մթնոլորտային օդի աղտոտման աղբյուր են հանքերը: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղեկատվության համաձայն՝ 2024թ. Երևանում 17 ոչ մետաղական հանքի շահագործման համար ընդերքօգտագործման իրավունք է տրված 14 կազմակերպության: Դրանք են.

1. Երևան, Ջրվեժի գիպսատար կավերի հանքավայրի 2-րդ հանքամարմին, շահագործող՝ «Գաջ» ՓԲԸ
2. Ավանի աղի հանքավայր, շահագործող՝ «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ
3. Աստղիկի գիպսատար ապարների և բազալտի հանքավայր (բազալտի տեղամաս), շահագործող՝ «Կվարց» ԱԿ
4. Աստղիկի գիպսատար կավերի և բազալտի հանքավայրի գիպսատար կավերի արևելյան տեղամաս, շահագործող՝ «Կվարց» ԱԿ
5. Սպանդարյանի բազալտ «Ամելիա մայնինգ Քամփնի» ՓԲԸ

⁹ <https://www.ecolur.org/hy/news/air/15651/>

¹⁰ <https://www.yerevan.am/hy/news/noyemberi-13-its-erewani-kentronowm-zhame-07-00-its-minch-ew-21-00-n-kargelvi-berhnatarneri-ert-ewek/>

¹¹ <https://www.yerevan.am/hy/elders-decisions/43-n-1/>

7. Սարի թաղի գիպսատար կավի հանքավայրի հարավ-արևելյան տեղամաս, «Գաջեգործ» ՓԲԸ
8. Սպանդարյանի բազալտ, «Երևանյան բազալտ» ՍՊԸ
9. Սպանդարյանի բազալտներ, «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
10. Վարդաշենի բազալտ, «ԱՎԱ-2000» ՍՊԸ
11. Հաղթանակի բազալտ, «ԻՔՍ-ԻԳՐԵԿ» ՍՊԸ
12. Աստղիկի գիպսատար ապարի և բազալտի հանքավայրի 1-ին տեղամասի պաշարի հավելած, «ԴԵԼՏԱ-ՖՐԱԳՄԵՆՏ» ՍՊԸ
13. Ողջաբերդի անդեզիտաբազալտ /Լեսնոյ տեղ./, «ԲԱԶԱԼՏ ԲՐՈԿԵՆ» ՍՊԸ
14. Աջափնյակի դոլերիտային բազալտների հանքավայր («ՎԱԼՈՂՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ» ՍՊԸ Անվանափոխվել է «ՄԵԳԱՍԹՈՆ» ՍՊԸ
15. Նորքի բազալտի հանքավայրի Լիլիթ-Գոռ տեղամաս, «ՎԱԼՈՂՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ» ՍՊԸ Անվանափոխվել է «ՄԵԳԱՍԹՈՆ» ՍՊԸ
16. Սպանդարյանի տուֆերի և բազալտի հանքավայրի բազալտի 3-րդ տեղամաս, «ԴՈՐՈՇՆԻԿ Ա» ՍՊԸ
17. Գաջահանի գիպսի հանքավայր (Էրեբունի վարչ. շրջան), «ԳԱՁ» ՓԲԸ
18. Սպանդարյանի բազալտների հանքավայր, «ՇԻՐԻՆՇԻՆ» ՍՊԸ

Հանքերից արդյունահանվում է բազալտ, գիպսատար ապար, կավ, քարաղ: Հանքերը տեղակայված են Երևանի Նոր Նորք վարչական շրջանի հարավային, հարավ-արևելյան հատվածներում, Աջափնյակ վարչական շրջանի արևմտյան, Էրեբունի վարչական շրջանի հյուսիսային հատվածներում, Ավանում: Հանքերից միայն Ավանի քարհանքն է շահագործվում փակ եղանակով:

Ընդերքօգտագործման պայմանագիրն ընդերքօգտագործողի համար պարտավորություն է սահմանում ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի շրջակա միջավայրի մյուս օբյեկտների, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների փաստակար ազդեցությունից: Այս պարտավորությունը պատշաճ չի կատարվում՝ բացասական ազդեցություն թողնելով Երևանի շրջակա միջավայրի վրա:

Գրեթե բոլոր ոչ մետաղական հանքավայրերը մոտ են գտնվում քաղաքի բնակելի թաղամասերին: Հանքերի շահագործումն իրականացվում է բաց եղանակով և ուղեկցվում է ռեիլեֆի էական փոփոխություններով: Դեգրադացվում է հողը, առաջանում են գոգավորություններ և փոտորակներ, որոնց պատճառով ձևավորվում են լանջային պրոցեսներ, սողանքներ, փլվածքներ, տեխնածին գրունտեր, կատարվում են ջրային ռեսուրսների ձևավորման և տեղաբաշխման փոփոխություններ,

մթնոլորտային օդի էական աղտոտումներ: Հանքերը շահագործող ընկերություններն իրենց ընդերքօգտագործման պայմանագրերով չունեն Երևան համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման աջակցմանն ուղղված պարտավորություններ: Այս ընկերությունների կողմից չեն իրականացվում բնապահպանական միջոցառումներ, փոշու արտանետումների մեղմման, կանաչ գոտիների ստեղծման աշխատանքներ:

Ընդերքօգտագործողները պարտավոր են, ՀՀ կառավարության 2018 թ. փետրվարի 22-ի N 191-Ն որոշման¹² համաձայն՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումներ իրականացնել և արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնել Շրջակա միջավայրի նախարարություն: Երևանում ընդերքօգտագործում իրականացնող 15 կազմակերպությունից միայն 4-ը՝ «Երևանյան բազալտ», «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ», «ԻՔՍ-ԻԳՐԵԿ», «ՇԻՐԻՆՇԻՆ» ՍՊԸ-ներն են ներկայացրել հաշվետվություն: Մինևույն ժամանակ, այս որոշմամբ որևէ պատասխանատվություն նախատեսված չէ նման հաշվետվություն չներկայացնելու դեպքերի համար:

Մթնոլորտային օդի մշտադիտարկում

«Երևանի կայուն քաղաքային տրանսպորտի ներդրում» ծրագրի շրջանակներում Ասիական Զարգացման Բանկի Հայաստանում մշտական առաքելության կողմից Երևանի քաղաքապետարանին են տրամադրվել օդի որակի մոնիթորինգի սենսորներ, որոնցով Երևանի քաղաքապետարանը մշտադիտարկում է իրականացնում:

Երևանի քաղաքապետարանը ստեղծել է առցանց պորտալ¹³, որտեղ երևում են մայրաքաղաքի մթնոլորտային օդի՝ փոշով աղտոտվածության ցուցանիշները: Ըստ քաղաքապետարանի ներկայացուցիչների՝ Երևանի ԿՔԳԾ-ի շրջանակում բարելավվել է օդի որակի քաղաքականության, մեթոդաբանության և մշտադիտարկման համակարգը: «Մեզ չեն բավարարում պետական մոնիտորինգի տվյալները, որը չի չափում փոշու առանձին տեսակները և ավտոմատ չէ: 2022թ. Երևանում տեղադրվեցին օդի որակի մոնիտորինգի 5 սարքեր: Ավագանու որոշմամբ կառուցապատողների առջև դրվեց պարտավորություն տեղադրել մոնիտորինգի սարքեր: Կառուցապատողների մի մասն իրականացրել է այդ պարտավորությունը», - ասել է Երևանի քաղաքապետարանի Բնապահպանության վարչության պետի տեղակալ Գորիկ Ավետիսյանը¹⁴:

Այժմ օդի դիտարկման սարքերի թիվը 117 է: Երևանի քաղաքապետարանի տվյալների համաձայն, մթնոլորտային օդում փոշու պարունակությունը չի գերազանցում սահմանային թույլատրելի խտությունը 2024թ. օգոստոսին¹⁵ ¹⁶: Մինչդեռ ՀՀ շրջակա

¹² <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=120135>

¹³ <https://gis.yerevan.am/portal/apps/dashboards/f1f602e3496843bba46abf6722ec42d2>


¹⁴ <https://www.ecolor.org/hy/news/cities/15651/>

¹⁵ <https://www.yerevan.am/hy/news/arhants-normativayin-kanonneri-pahpanman-erewan-k-aghak-owm-orewe-benzalts-akayan-ch-petk-e-ashkhati/>


¹⁶ https://www.youtube.com/watch?v=7_BHhhUWg3M

միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը-ի տվյալներով առկա են մթնոլորտային օդում փոշու ՍԹԿ-ի գրագանցումներ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը Երևանում ունի 45 դիտակետ և 5 դիտակայան: ՊՈԱԿ-ի հրապարակած տվյալների համաձայն՝ Երևանում հիմնականում փոշու սահմանային թույլատրելի խտության գերազանցումներ են դիտվում Կենտրոն, Նոր Նորք, Աջափնյակ, Արաբկիր և Շենգավիթ վարչական շրջաններում:




Նկար 3. Փոշու պարունակությունը Երևանի մթնոլորտային օդում 2024թ. օգոստոսի 24-ից մինչև 2024թ. սեպտեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում:



Նկար 4. Փոշու պարունակությունը Երևանի մթնոլորտային օդում 2024թ. հունիսի 24-ից մինչև 2024թ. հուլիսի 3-ն ընկած ժամանակահատվածում:

Ծմբի երկօքսիդի ՍԹԿ-ի գերազանցումներ են արձանագրվում Արաբկիր և Նոր Նորք վարչական շրջաններում:



Նկար 5. Մթնոլորտային թթվածածիկի պարունակությունը Երևանի մթնոլորտային օդում 2024թ. օգոստոսի 8-ից մինչև 2024թ. օգոստոսի 14-ն ընկած ժամանակահատվածում:

Ազոտի երկօքսիդի գերազանցումներ դիտվում են Կենտրոն, Նոր Լորթ, Շենգավիթ վարչական շրջաններում:

Եզրակացություն

Երևանի քաղաքապետարանի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալները մթնոլորտային օդում փոշու պարունակության վերաբերյալ տարբերվում են:

Երևանը դեռ չի հասել Երևանի կանաչ քաղաք գործողությունների ծրագրով նախանշած 2022թ-ի թիրախին. **«Մինչև 2022թ-ը աղտոտման բոլոր ազգային պարտադիր մակարդակները (արտահայտված սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներով) բավարարված կլինեն և կհամապատասխանեն ԵՄ սահմանաչափերին»:**

Երևանի քաղաքապետարանը ստեղծել է առցանց պորտալ¹⁷, որտեղ քարտեզի վրա երևում են մայրաքաղաքի մթնոլորտային օդի վերաբերյալ տվյալները: Երևանը հասել հետևալ թիրախին. **«Երևանի քաղաքապետարանը (ԵՔ) ստեղծած կլինի Երևանի օդի աղտոտման ինտեգրված մոդել, որը հիմնված կլինի ներկա օդերևութաբանական տվյալների և անշարժ ու շարժական աղբյուրներից արտանետումների տվյալների վրա, ստուգված մշտադիտարկման տվյալների հետ և, որը կստեղծի օդի աղտոտման ինտերակտիվ առցանց քարտեզ»:**

Երևանում փոքր ձեռնարկությունների կողմից արտանետումների արժեքների ինքնահաղորդում չի կատարվում, որոնց արտանետումների գումարային ծավալը կարող է հասնել մեծ ցուցանիշների: Երևանը չի հասել հետևյալ թիրախին. **«ԵՔ-ը սահմանած կլինի աղտոտիչների ինքնամշտադիտարկման տվյալների կանոնավոր ստացման մեխանիզմ: (Ձեռնարկությունների կողմից արտանետումների արժեքների ինքնահաղորդումը կսահմանվի կարճաժամկետ ժամանակահատվածների համար, օրինակ, 10 կամ 20 րոպեի արժեքների համար՝ այնպես, որ դրանք հնարավոր լինի**

¹⁷ <https://gis.yerevan.am/portal/apps/dashboards/f1f602e3496843bba46abf6722ec42d2>

համեմատել առավելագույն թույլատրելի արտանետումների կամ ԵՄ/ ԱՀԿ արժեքների հետ): Երևանը կունենա օդի աղտոտվածության մշտադիտարկման հուսալի անշարժ/ շարժական համակարգ»:

Երևանը չի մշակել երկրորդ ԿՔԿԾ-ն՝ ներառյալ օդի աղտոտման կրճատմանն ուղղված գործողությունները, ինչը ևս նախատեսված թիրախ է ԿՔԿԾ-ով:

ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱՅ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - «ԹԱՓՈՆՆԵՐ» ԲԱՂԱԴՐԻՉ

Երևանի «Կանաչ քաղաք գործողությունների ծրագրի միջնաժամկետ թիրախներն (2025թ.) են.

- Գոյացած ՔԿԿԾ-ների 100%-ը և այլ թափոնների 50%-ը կտեղադրվեն թափոնների տնօրինման կամ մշակման պատշաճ օբյեկտներում: Այդ օբյեկտները կվերանախագծվեն, կկառուցվեն և կշահագործվեն համաձայն ԵՄ (կամ այլ միջազգային) չափորոշիչների:
- Երևանը հաստատած կլինի Թափոնների կառավարման տասնամյա ծրագիր:
- ՔԿԿԾ-ներ և այլ թափոններ գոյացնողների 95%-ից ավելին կվճարի համապատասխան պարտադիր վճար աղբահանության և հեռացման համար:
- ՔԿԿԾ-ների վերամշակման ցուցանիշը կկազմի 15%-ից ավելի, այլ թափոնների համար՝ 30%:
- Տեսակավորման և վերամշակման ինտեգրված համակարգը ներդրված կլինի՝ հասույթները վերադարձնելով ՔԿԿԾ-ների կառավարման համակարգ (ՔԿԿԾ-ների կառավարման ծախսեր (> 10 %՝ տարեկան):
- Ազգային կողմից համակարգի համաձայն՝ ներդրված կլինի գոյացած և տնօրինված ՔԿԿԾ-ների՝ հանրությանը մատչելի տվյալների շտեմարան:
- «Կանաչ քաղաքի իրազեկման կենտրոնը» պարբերաբար կիրականացնի իրազեկման քարոզարշավներ և կարողությունների զարգացման միջոցառումներ:

Երևանը չունի ԵՄ (կամ այլ միջազգային) չափորոշիչների համապատասխանող աղբավայր: Երևանի Նոբարաշենի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրը չի համարվում սանիտարական աղբավայր: Աղբավայրում հաճախակիացել են հրդեհները, որոնք մթնոլորտային օդն աղտոտում են թունավոր նյութերով:

2015թ. ՀՀ կառավարությունը վարկային համաձայնագրեր կնքեց ՎՁԵԲ-ի և ԵՆԲ-ի հետ՝ իրականացնելու «Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիրը»: Ծրագրի իրականացման համար տրամադրվել է 8 միլիոն եվրո վարկ ԵՆԲ-ից¹⁸, 8 միլիոն եվրո վարկ՝ ՎՁԵԲ-ից¹⁹, 8 միլիոն եվրո դրամաշնորհ՝ ԵՄ-ից՝ Հարևանության ներդրումային գործիքի միջոցով, 2 միլիոն եվրո դրամաշնորհ՝ E5P հիմնադրամից: 2024թ-ին ծրագիրը չեղարկվեց: «Մոտ մեկ տասնամյակից ավելի բոլորը փորձել են իրականացնել այդ

¹⁸ <https://www.eib.org/en/projects/pipelines/all/20150017>
¹⁹ <https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/yerevan-solid-waste-project.html>

ծրագիրը: Ես անձամբ այդ պատասխանատվությունը վերցրել եմ ինձ վրա և ասել եմ՝ այս ծրագիրը մենք չենք կարող իրականացնել, որովհետև ծրագրի հիմքում ներդրված տրամաբանությունը թույլ չի տվել՝ այս ծրագիրն իրականացվի: Ես էլ չեմ հավատում հրաշքներին: Եթե ինչ-որ մի ծրագիր 10 տարի չի իրականացվում, դա ուրեմն իրականացվող ծրագիր չէ այլևս», - ասել է Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը: Ըստ նրա՝ քննարկվում է նոր ծրագրի իրականացում Համաշխարհային բանկի հետ²⁰:

Երևանի քաղաքապետարանն իրականացնում է «Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարման ընդհանուր մարտահրավերների շուրջ» ծրագիրը: Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական միության միջև 2019թ. դեկտեմբերի 17-ին ստորագրված NEAR-TS/2019/412- 943 դրամաշնորհային պայմանագրով սույն ծրագրով նախատեսվում է, սերտորեն համագործակցելով շահագրգիռ կողմերի հետ, ուժեղացնել վտանգավոր թափոնների կառավարումը քաղաքային կառավարման մակարդակում քաղաքից քաղաք համագործակցության, քաղաքացիների առավել ակտիվ մասնակցության, ինչպես նաև լավագույն փորձը գործնականի վերածելու միջոցով: Ծրագրի տևողությունը 48 ամիս է, ընդհանուր արժեք՝ 5 326 377,00 եվրո, ԵՄ ներդրումը՝ 4 793 739 եվրո, Երևանի քաղաքապետարանի ներդրումը՝ 366 369,60 եվրո, Վարշավայի քաղաքապետարանինը՝ 106 303,00 եվրո, Տիրանայի քաղաքապետարանինը՝ 81 465,10 եվրո Ենթադրամաշնորհներ՝ 8 500,00 եվրո:

Երևանի քաղաքապետարանն ադրի տեսակավորում սկսել է իրականացնել 2020թ-ից «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի միջոցով այդ ծրագրի շրջանակներում: Երևանը ստացել է 900՝ թղթի, պլաստիկի, ապակու և այլումինի տեսակավորման թափոնամանի նոր խմբաքանակ: Ծրագրի շրջանակներում Երևանում ակնկալվում է թափոնների հավաքման հասցեները 135-ից հասցնել 300-ի, թափոնամանները՝ 1200-ի:

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կայքում ստեղծվել է թափոնամանների տեղադրման հասցեների քարտեզ²¹:

2020թ-ից սկսած ծրագրի իրականացման արդյունքում յուրաքանչյուր տարի 30 տոննա պլաստիկ ու 30 տոննա ապակի, շուրջ 600 տոննա թուղթ տեսակավորվել է և վերամշակման ուղարկվել: «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կանխատեսումներով՝ թափոնամանների քանակի ավելացման արդյունքում տարեկան 50 տոննա պլաստիկ, 50-60 տոննա ապակի և 1000 տոննա թուղթ կտեսակավորվի և կուղարկվի վերամշակման:

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը տարեկան մոտ 50 միլիոն դրամ է վաստակել՝ թափոնները հավաքագրելով ու հանձնելով տնտեսավարողներին: Ըստ հաշվարկների՝ հաջորդիվ կկարողանան այդ թիվը հասցնել 100 միլիոն դրամի:²² Ըստ ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանի՝ Երևանում

²⁰ <https://www.ecolor.org/hy/news/waste/15629/>

²¹ <https://greenyerevan.am/%d6%84%d5%a1%d6%80%d5%bf%d5%a5%d5%a6/>

²² <https://www.ecolor.org/hy/news/waste/15354/>

տեսակավորման գործարան կառուցելու համար կպահանջվի 30 միլիոն եվրոյի ներդրում²³:

Եզրակացություն

Երևանը դեռ չունի ԵՄ (կամ այլ միջազգային) չափորոշիչների համապատասխան աղբավայր: «Երևանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման» ծրագիրը չեղարկվել է, նոր աղբավայրի կառուցման ապագան անորոշ է: Երևանը չի հասել նախանշված թիրախին:

Չնայած իրականացվող աղբի տեսակավորման միջոցառումներին՝ դրանք բավարար չեն: Թափոնների տեսակավորումը կամավոր միջոցառում է, և ոչ բոլորն են տեսակավորում: Հաշվի առնելով, որ տարեկան Նուբարաշենի աղբավայրում կուտակվում է 600 000 տոննա թափոն, ապա 2020թ-ից սկսած աղբավայր չի մտնում տեսակավորված ապակու, պլաստիկի և թղթի ընդհանուր թափոնների 0,11%-ը: Անգամ եթե այս թափոնների տեսակավորման ծավալներն ավելանան՝ հասնելով 1110 տոննայի, ապա ցուցանիշը կկազմի 0,185%: Այսպիսով, Երևանը չի հասել նախանշված թիրախին, որն է. «ՔԿԿԹ-ների վերամշակման ցուցանիշը կկազմի 15%-ից ավելի, այլ թափոնների համար՝ 30%»:

Երևանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը տարեկան մոտ 50 միլիոն դրամ է վաստակել թափոնների տեսակավորման և վերամշակողներին հանձնելով: Այդպիսով, Երևանը որոշակիորեն հասել է նախանշված թիրախին հասույթները ՔԿԿԹ-ների կառավարման համակարգ վերադարձնելու մասով:

2024թ. փետրվարին Երևանի քաղաքապետարանում քննարկվել են թափոնների կառավարման թվային տեխնոլոգիաների ու հավելվածների ներդրման խնդիրները: Հավելվածը հնարավորություն կտա առցանց վերահսկելու, տեղեկատվություն ստանալու աղբահանության ողջ գործընթացի վերաբերյալ՝ սկսած աղբատարների երթուղուց, աղբամանների կառավարումից մինչև աղբի տեղափոխում: Մակայն դա դեռ կյանքի չի կոչվել և Երևանը չի հասել ՔԿԿԹ-ների՝ հանրությանը մատչելի տվյալների շտեմարան ունենալու թիրախին:

ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՋՈՒՐ

Միջնաժամկետ թիրախներն են (2025թ.).

- Չհաշվառված ջրի տոկոսը չի գերազանցի 65%-ը: Չհաշվառված ջրի կրճատումը հիմնականում ձեռք կբերվի ապօրինի սպառումը (ապօրինի միացումները) կրճատելու միջոցով:
- Արտահոսքերի կրճատման գործողությունների հաստատված ծրագիր ջրամատակարար ընկերության կողմից՝ հիմնվելով վարչական շրջանների ջրաչափումների վրա:

²³ <https://www.ecolur.org/hy/news/waste/15591/>

- Տնային տնտեսությունների 100%-ը կունենա խմելու ջրի 24-ժամյա սպասարկման հասանելիություն:
- GIS-ի վրա հիմնված ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կենտրոնական հաշվառման (կադաստրի) տվյալների շտեմարանը կձառայի ամենօրյա գործածության համար:
- Ջրի ենթակառուցվածքների գլխավոր հատակագիծը մշակված կլինի:
- Ջրամատակարար ընկերության կողմից հաստատված կլինեն ջրամատակարարման համակարգի նորացման և կոյուղու ընդարձակման պլաններ:
- Ջրամատակարար-ման համակարգի ամենամեծ արտահոսքերունեցող հատվածները նորոգված կլինեն:
- Կոյուղու հատվածները, որոնք գերբեռնված են՝ կոյուղու և անձրևաջրերի ջրատարների միացման հետևանքով, վերանորոգված կլինեն, որպեսզի կեղտաջրերն ուղղվեն կենտրոնական ԿՄԿ:
- Երևանի մասնավոր տների հատվածի համար բակերի և այգիների ոռոգման արդյունավետ համակարգը՝ մակերևութային ջրերի օգտագործմամբ, կխրախուսվի իրազեկման քարոզարշավների ու աշխատաժողովների միջոցով:
- Մակերևութային ջրերի որակի մշտադիտարկման ծրագիրը թարմացված կլինի և կներառի միկրոկենսաբանական ցուցանիշների, օրինակ՝ աղիքային բակտերիաների՝ E. Coli և enterococci, մշտադիտարկում:

Երևան քաղաքի խմելու ջրի մատակարարումը և ջրահեռացումն իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից, որն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ կառավարության՝ ի դեմս ՏԿԵ նախարարության ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ու «Վեոլիա Օ-Կոմպանի ժեներալ դեզ Օ» ընկերության միջև կնքված վարձակալության պայմանագրի համաձայն:

Մայրաքաղաքում ջուրը սպառողին բաշխվում է 418 կմ երկարությամբ մայրուղային ջրատարների, 1431 կմ երկարությամբ բաշխիչ ցանցի և 192.9 հազ. խմ տարողությամբ 20 օրվա կարգավորիչ ջրամբարներից (ՕԿՁ): Ջրահեռացումն իրականացվում է 1759 կմ երկարությամբ կոյուղագծերով, այդ թվում՝ 1433 կմ փողոցային ցանց, 326 կմ՝ միջբակային ցանց²⁴:

Երևան քաղաքի խմելու ջրի մատակարարման համակարգը, կոյուղատար համակարգը մաշված են: Երևանի 82 հասցեում 12000 բնակչի համար կոյուղատար համակարգ ընդհանրապես կառուցված չէ: Երևանը չունի ամբողջական հեղեղատար համակարգ:

Երևանի քաղաքապետարանի ուսումնասիրությունների համաձայն՝ բակային տարածքների հեղեղատար համակարգը գործում է մոտ 40 տոկոսով, բազմաբնակարան շենքերն սպասարկող հեղեղատարները մեծամասամբ նպատակին չեն ծառայում: Մայրաքաղաքի 29 հասցեում (18,8 կմ-ոց) հեղեղատար համակարգը բացակայում է, 7,2 կմ-ոց հատվածում էլ համակարգը պետք է վերակառուցել²⁵:

²⁴ <https://www.yerevan.am/hy/communal-services/>

²⁵ <https://www.ecolor.org/hy/news/officials/15626/>

Խմելու ջուրը չի բավարարում քաղաքի պահանջարկին, այդ պատճառով որոշ վարչական շրջաններում «Վեոլիա ջուր» ընկերությունը քաղցրահամ ջրերին արտեզյան ջուր է խառնում, որպեսզի բավարարի պահանջարկը: Մայրաքաղաքի ոչ բոլոր թաղամասերն ունեն 24-ժամյա ջրամատակարարում: Դրան գումարվել է Երևանի կառուցապատման համար ձևավորվող պահանջարկը: «Մայրաքաղաքում և՛ ջրակորուստներն են աճել, և՛ վթարները: Ջրաղբյուրների մակարդակները նվազել են: Ջրամատակարարման համակարգն ունի կապիտալ ներդրումների կարիք: Ներդրումային չափի մասին գնահատական տալու համար անհրաժեշտ է գույքագրում կատարել»: Այս մասին ասել է Երևանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը Հանրային հեռուստաընկերության եթերում²⁶:

Ջրահեռացման, կոյուղատար համակարգի մաշվածությունը սպառնում է մարդկանց անվտանգությանը. կոյուղաջրերը հոսում են բազմաբնակարան շենքերի նկուղային հարկեր, դուրս են գալիս փողոց, սպառնում հասարակական միջավայրին:

«Վեոլիա ջուր» ընկերությունը սպասարկում է ՀՀ կառավարության հետ կնքված պայմանագրով իրեն հանձնված գյուլքը, մինչդեռ նոր կառուցապատման արդյունքում մոնտաժված մոտ 70 կմ միասին ջրատար, կոյուղատար, հեղեղատար դեռևս հանձնված չէ «Վեոլիա ջուր» ընկերությանը:

Ե՛վ «Վեոլիա ջուր»-ը, և՛ Երևանի քաղաքապետարանն իրականացնում են ջրատար համակարգերի վերանորոգման, փոխարինման աշխատանքներ, սակայն դրանք չեն կարող համակարգային խնդիր լուծել:

Չի բարելավվում Երևանով հոսող Հրազդան, Գետառ գետերի, Երևանյան լճի ջրի որակը: 2024թ-ի առաջին եռամսյակում ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալների համաձայն՝ Հրազդան, Գետառ գետերը և Երևանյան լիճն ունեցել են 5-րդ դասի աղտոտվածություն²⁷:

Երևանի քաղաքապետարանը գույքագրել է կոյուղատարերի շուրջ 700 ապօրինի միացումներ դեպի Հրազդան գետ, Գետառ և Երևանյան լիճ: Երևանի քաղաքապետարանը «Վեոլիա Ջուր» ընկերության և Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հետ գործընթաց է նախաձեռնել խնդրի կարգավորման համար:

Գետառ գետի վրա կառուցվում է մաքրման կայան: Երկու աղբորսիչ է տեղադրվելու Հրազդան գետի վրա:

Երևանի չլուծված խնդիրներից է կեղտաջրերի մաքրումը: «Աերացիա» մաքրման կայանը մասամբ է կատարում մեխանիկական մաքրում, կայանի ճաղավանդակային հատվածը որսում է խոշոր աղբը: Կեղտաջրերը հոսում են Հրազդան գետ:

²⁶ <https://www.youtube.com/watch?v=3e3GGPKS87A>

²⁷ <https://meteomonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekang/eramsjak/l-2024.pdf>

Պաշտոնական տվյալներով՝ «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի փռոցով տարեկան Հրագդան գետ է լցվում 55 մլն խմ կեղտաջուր: Երևան քաղաքից դուրս գալուց հետո Հրագդան գետը հիմնականում ունի 5-րդ դասի ամենաբարձր աղտոտվածություն:

Երևանի «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի տարածքում 2015-2016թթ-ին կառուցվեց կեղտաջրերի մեխանիկական մաքրման նոր կայան Հայաստանի և Ֆրանսիայի կառավարությունների միջև կնքված [Ֆինանսական արձանագրության](#) շրջանակներում: Հայաստանին տրամադրվեց 24 900 000 եվրո, որից 500 հազարը՝ դրամաշնորհ, 24400000-ը՝ փոխառություն Երևանի խմելու ջրի համակարգի բարելավման և մաքրման համար: Մամուլում առկա հրապարակումների համաձայն՝ աշխատանքների ավարտից հետո մաքրման նոր կայանը չի աշխատել առկա թերությունների, կայանի կառուցման պայմանագիրը ավարտված չհամարվելու, փորձաքննական գործընթաց չանցնելու պատճառով: 2019թ. «Աերացիա»-ի ծրագրի փաթեթը փոխանցվել է «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ին:

Էկոլոգիայի հարցում է ուղարկել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (ՏԿԵՆ)՝ պարզելու.

1. արդյո՞ք կատարվել են վարկային պարտավորությունները և արդյո՞ք առկա է աշխատանքների ավարտական ակտ
2. որո՞նք են «Աերացիա» մաքրման նոր կայանի չաշխատելու պատճառները
3. ի՞նչ քայլեր է ձեռնարկում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն «Աերացիա» մաքրման կայանի շահագործումն ապահովելու համար
4. կայանի չաշխատելու պայմաններում տարեկան որքա՞ն կեղտաջուր է լցվում Հրագդան գետ:

Ի պատասխան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Նարեկ Մանուկյանը սույն թվականի մայիսի 5-ի N ՆՄ//12884-2024 նամակով տեղեկացրել է.

«Հայտնում ենք, որ «Աերացիա ԿՄԿ վերականգնման աշխատանքներ» (N ՀԶԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/3) պայմանագիրը հանդիսանում է Fidic Red Book (կարմիր գիրք) դասի, և պայմանագրով իրականացված գործընթացների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Աերացիա ԿՄԿ-ի նոր կայանի՝ որպես գույքային միավոր ձևավորված լինելու հիմքերն առկա չեն, և պայմանագիրը համարվում է անավարտ:


Պայմանագրի պատվիրատուի իրավունքներն ու պարտավորությունները իրացնելու, պայմանագրի կատարումն ապահովելու, իսկ ստեղծված արդյունքը որպես գույքային միավոր ձևավորելու և «Արեացիայի» նոր ԿՄԿ-ի հետագա գործարկումն ու շահագործումն ապահովելու նպատակով՝ բազմակողմանի ուսումնասիրություններ և քննարկումներ են կազմակերպվել: Ներկայումս քննարկումներ են ընթանում «Վեոլիա

Ջուր» ՓԲ ընկերության հետ կայանի շահագործումը վերջինիս կողմից իրականացնելու հնարավորությունների վերաբերյալ:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի վարությամբ է գտնվում թիվ 61205320 գործը՝ «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերականգնման աշխատանքներում ի հայտ եկած թերությունների փաստով:

«Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայան մուտք գործող փաստացի ելքը կազմում է շուրջ 150 000 խմ/օր կամ 55 մլն խմ/տարի:

Հայտնում ենք նաև, որ «Աերացիա» ԿՄԿ վերականգնման աշխատանքների ավարտական ակտ առկա չէ, իսկ վարկային պարտավորությունների կատարման վերաբերյալ ճշգրտված տեղեկատվություն ստանալու համար առաջարկում ենք դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն»:



Եզրակացություն

Երևանը ֆինանսական կապիտալ ներդրումների կարիք ունի՝ ջրամատակարարման և ջրահեռացման մաշված համակարգի փոխման և ընդլայնման համար: Իրականացվող միջոցառումները համակարգային չեն լուծում խնդիրը: Ջրակորուստները և ջրատարների վթարներն ավելացել են համակարգի մաշվածության պատճառով: Հեղեղատար համակարգն անմխիթար վիճակում է:

Մայրաքաղաքում հորդառատ անձրևներից հետո ջրածածկվում են փողոցներ, գետնանցումներ, նկուղներ, խանութներ, տներ:

Տարեցտարի խմելու ջրի աղբյուրների ջրի ծավալը նվազում է, պահանջարկի բավարարման համար քաղցրահամ ջրերին «Վեոլիա ջուր»-ը խառնում է արտեզյան ջրեր, ինչից վատանում է ջրի որակը:

«Աերացիա»-ի կեղտաջրերի մեխանիկական մաքրման նոր կայանը կառուցվել է, սակայն չի շահագործվում, չունի ավարտական ակտ: «Աերացիա» մաքրման կայանը մասամբ է կատարում մեխանիկական մաքրում:

Անհրաժեշտ է վերանայել ԿՔԳԾ-ով նախատեսված միջոցառումները՝ հաշվի առնելով առաջացող նոր խնդիրները:

ԳՅՈՒՄՐԻ

ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ-ՕՐԻ ՈՐԱԿ և ԶԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ

1. Մինչև 2025թ. միջնաժամկետ թիրախ.
2. Փոշու միջին տարեկան կոնցենտրացիա՝ 0.15 մկգ/մ³:
3. CO₂-ի տարեկան արտանետումները ՀՆԱ-ի միավորի հաշվով՝ 20%՝ համեմատած 2014 թ. մակարդակների հետ:
4. CO₂-ի՝ մեկ շնչին համարժեք արտանետումներ՝ 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով:
5. Էներգասպառումն արդյունաբերության ոլորտում՝ ըստ ՀՆԱ-ի մեջ արդյունաբերության ցուցանիշի միավորի՝ 5%՝ համեմատած 2015 թ. մակարդակների հետ:
6. Մասնավոր տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն ամենօրյա երթևեկության մեջ՝ 80%:
7. Անշարժիչ տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն ընդհանուր տեղաշարժի մեջ՝ 2%:
8. Էլեկտրականությամբ սնվող, հիբրիդային շարժիչներով, հեղուկացված նավթային գազով (ՀՆԳ) և սեղմված բնական գազով (ՄԲԳ) աշխատող հանրային տրանսպորտի ընդհանուր շարժակազմի մասնաբաժին՝ 60%:
9. Էլեկտրականությամբ աշխատող քաղաքային տրանսպորտային միջոցների մասնաբաժինը՝ 20%:
10. Էներգասպառումը շենքերում՝ 23 կՎտ/ժ:
11. Էներգասպառումը փողոցային լուսավորության համար՝ 25,000 կՎտժ/կմ:
12. Օդն աղտոտող աղբյուրների հայտնաբերված և մշտադիտարկվող մասնաբաժին՝ 30%:
13. Տվյալների տարեկան հավաքագրման ենթակա տրանսպորտային միջոցներ՝ 100%:

Գյումրու մթնոլորտային օդի հիմնական մարտահրավերներն են՝ փոշով աղտոտվածության բարձր մակարդակը, ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիայի հետևանքով առաջացող վտանգը, CO₂-ի՝ յուրաքանչյուր շնչին


բաժին ընկնող բարձր մակարդակ և CO₂-ի արտանետումների քանակ ՀՆԱ-ի աճի յուրաքանչյուր միավորի համար:

Ըստ Գյումրու ԿՔԳԾ-ի՝ փոշու միջին տարեկան կոնցենտրացիան 325.6 մկգ/մ³ է, ծծմբի երկօքսիդի (SO₂) միջին օրական կոնցենտրացիան՝ 36.7 մկգ/մ³, CO₂-ի տարեկան արտանետումներ ՀՆԱ-ի միավորի հաշվով կազմել է ՀՆԱ-ի՝ 0.94 տ/մ. ԱՄՆ դոլար, իսկ CO₂-ի համարժեքի տարեկան արտանետումները մեկ շնչի հաշվով՝ 3.36 տոննա/տարի: Գյումրու օդի որակի վիճակի վրա ճնշում գործադրող (ներագող) հիմնական ոլորտներն են «տրանսպորտը», «շինարարությունը, էներգասպառումն ու լուսավորությունը»:

Այս թիրախներին հասնելու համար «տրանսպորտ», «շենքեր, էներգամատակարարում և լուսավորություն», «կոշտ թափոններ», «արդյունաբերություն», «հողօգտագործում» ոլորտներում նախատեսվել են միջոցառումներ:

Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 1 անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2023թ. տարբեր ամիսների արձանագրվել են փոշու ՍԹԿ-ի գերազանցումներ: Ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի ՍԹԿ-ի գերազանցումներ 2023թ. չեն արձանագրվել:



Նկար 6. Փոշու պարունակությունը Գյումրու մթնոլորտային օդում

Գյումրու քաղաքատարածության ներկայացուցիչները նշում են, որ փոշու աղտոտվածությունը Գյումրիում ավելի է, քան նշում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

«Գյումրիում օդի որակի մշտադիտարկման միայն մեկ դիտակայան է գործում, որը տեղակայված է քաղաքի ամենից կանաչապատ հատվածում: Նույնիսկ այդ դիտակայանի չափումներով նորմայից 1-2 անգամ շատ է փոշին: Էլ չենք ասում, որ մի քանի դիտակայան լիներ: Մյուս կարևոր խնդիրն այն է, որ հաշվարկները կատարում են միջին կոնցենտրացիայով: Ցերեկը փոշին շատ է, գիշերը՝ չկա: Միջին հաշվարկով լավ է ստացվում, բայց կարող է ցերեկը նորմայից տասն անգամ բարձր լինել»,-

Էկոլոգիայի հետ հանդիպմանն ասել է Գյումրու «Բիոտոֆիա» առողջապահության, բնապահպանության, գյուղատնտեսության զարգացման կենտրոնի ՀԿ-ի նախագահ Գևորգ Պետրոսյանը:

Ըստ Գյումրիի քաղաքապետության ներկայացուցիչների՝ Գյումրիում փոշու աղբյուր են շինարարությունը, չասֆալտապատացված փողոցները, սառցակալած փողոցներն ավազով լցնելն ու կանաչապատվածության ցածր մակարդակը:

Ըստ նրանց՝ անհրաժեշտ են հստակ հաշվարկման մեխանիզմներ ինչպես օդի աղտոտվածության իրական պատկերը հասկանալու, այնպես էլ համայնքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների իրական մակերեսը հաշվելու համար:²⁸

Եզրակացություն

Գյումրիին անհրաժեշտ է ավելացնել մթնոլորտային օդի աղտոտվածության չափման դիտակայանների քանակը և բարեփոխել հաշվարկման մեխանիզմները ավելի ճշգրիտ պատկեր ստանալու համար: Գյումրին դեռ չի հասել ԿՔԳԾ-ով սահմանված օդի աղտոտվածության նվազման նպատակին:

ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ-ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐ, ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ և ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՆԱՉ

2025թ. միջնաժամկետ թիրախ.

1. Մեկ բնակչի հաշվով կանաչ տարածքի ավելացում՝ մինչև 6 մ²:
2. Թռչունների տեսակների տարեկան աճ:

Գյումրու ԿՔԳԾ-ի համաձայն՝ կանաչ տարածքները պաշտոնական տվյալներով կազմում են մոտ 552 հա (2017), ինչը քաղաքի ընդհանուր մակերեսի 10%-ն է: Բաց կանաչ տարածքները նվազել են 1988 թվականի երկրաշարժի հետևանքով և 1990-ականների սկզբի էներգետիկ ճգնաժամի ընթացքում, երբ զգալի թվով ծառեր հատվում էին և օգտագործվում որպես վառելիք՝ տները ջեռուցելու համար: Բաց կանաչ տարածքների հարաբերակցությունը Գյումրու յուրաքանչյուր բնակչի հաշվով կազմել է 3.91 մ²/բնակիչ, մինչդեռ ԱՀԿ կողմից առաջարկվող նվազագույն արժեքը 9 մ² է: Նման հավակնոտ թիրախի հասնելու համար կարևոր է կանաչ տարածքների վերականգնումը և նորացումը ներառել համապատասխան քաղաքաշինական նախագծերում: Բացի այդ, քաղաքի գլխավոր պողոտաներում աճող ծառերի խտությունը նույնպես անբավարար է: Պահպանման գոտում ներառված արվարձանների բուֆերային գոտիների ճամփեզրերին գտնվող ծառերը նույնպես հատվել են 1988 թվականից ի վեր: Ծառուղիների մեծ մասն ընդհատվում է կամ փացել է մեկ շարքով, ինչը նվազեցնում է դրանց նշանակությունը:

Կանաչապատ տարածքների հաշվարկման վերաբերյալ տեղի քաղաքապետության ներկայացուցիչները նշում են. «Կանաչ քաղաք գործողությունների ծրագրում» նշված է Գյումրիում հաշվարկված մեկ շնչին հասնող 3,91 քմ կանաչապատ տարածք: Նոր

²⁸ <https://www.ecolor.org/hy/news/air/15565/>

տվյալներով՝ այդ ցուցանիշը 13 քմ-ից անցնում է: Բանն այն է, որ այժմ հաշվարկում բացի ընդհանուր կանաչապատ գոտուց ներառվում է նաև քաղաքից դուրս հիմնված անտառպուրակը, մինչդեռ ընդհանուր կանաչապատ տարածքի և անտառպուրակի հաշվարկը պետք է առանձին արվի»:

Ըստ նրանց՝ կարևոր է Գյումրիում կանաչապատ տարածքների իրական մշտադիտարկման իրականացումը և կանաչ տնկարկների ռեգիստր, ապա նաև զարգացման ռազմավարություն ունենալը, որը պետք է բխի քաղաքի գլխավոր հատակագծից ու քաղաքաշինական նպատակներից: Կարևորվեց Գյումրիի շուրջ անտառտնկման իրականացումը, ինչը որոշակիորեն կմեղմի քաղաքում օդի աղտոտվածության մակարդակը²⁹:

Եզրակացություն

Անհրաժեշտ են հստակ հաշվարկման մեխանիզմներ համայնքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների իրական մակերեսը հաշվելու համար:

ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ-ՋՈՒՐ

Մինչև 2025թ. միջնաժամկետ թիրախ

1. Ամոնիումի (NH4) կոնցենտրացիան գետերում և լճերում՝ 0.4-1.2 մգ/լ
2. Արդյունաբերական ջրի սպառումը որպես քաղաքային ջրի ընդհանուր սպառման տոկոս՝ 25%
3. Ջրամատակարարման ցանցի ծածկույթը և արդյունավետությունը բարելավվում են պլանների ու ներդրումների միջոցով՝ 75%
4. Անձրևաջրերի կամ կեղտաջրերի արտահոսքերի տարեկան քանակը՝ ցանցի երկարության 100 կմ-ի հաշվով՝ 50% նվազեցում՝ համեմատած 2017 թ. մակարդակների հետ
5. Կենցաղային և առևտրային ԿՁ-ի այն տոկոսը, որը մաքրվում է համաձայն կիրառվող ազգային չափանիշների՝ 60%
6. Չհաշվառված ջուր՝ 25-35%
7. Ջրի սպառումը քաղաքի ՀՆԱ-ի մեկ միավորի հաշվով՝ 0.4 մ3 /տարի:

Ջրային ռեսուրսին առնչվող Գյումրու առջև ծառայած կանաչ քաղաքի հիմնական մարտահրավերներն են.

- Կեղտաջրերի (ԿՁ) հավաքման անբավարար համակարգ և դրանց հեռացման անբավարար կարողություն, ինչն առաջացնում է հեղեղների, վատ ջրային միջավայրի և առողջական ռիսկեր

²⁹ <https://www.ecolur.org/hy/news/air/15565/>

- Ջրամատակարարման համակարգում չհաշվառված ջրի (ՀՀՋ) չափազանց բարձր մակարդակ
- Մակերևութային ջրերի որակի ոչ արդյունավետ մշտադիտարկում
- Ջրի ոչ արդյունավետ օգտագործման վարքագծեր և տվյալների սահմանափակ հասանելիություն ու մշտադիտարկում:

Գյումրիում մակերևութային ջրային հոսքերի ներկա վիճակ

«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2023թ. եռամսյակային տվյալների համաձայն՝ Ախուրյան գետի ջրի որակը Գյումրի քաղաքից ներքև գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գյումրու տարածքով հոսող երեք փոքր՝ Գյումրու, Ղոր-Ղոբիի և Չերքեզի ձորի գետերի մակերևութային ջրի որակը չի թեստավորվում կամ մշտադիտարկվում:

Գյումրիի բնակիչներն ահազանգում են, որ փլուզման վտանգի տակ է Գյումրի գետակի գետնուղին, ինչը կարող է աղետալի հետևանքներ ունենալ Գյումրի քաղաքի համար:

Ըստ բնակիչների՝ ժամանակին, երբ գետը վարարում էր, քաղաքի կենտրոնը տիղմով էր լցվում, անգամ կառքերը չէին կարողանում անցնել: Այդ պատճառով էլ հանրային միջոցներով 1907 թ-ին կառուցվել է 6 մ լայնությամբ, 4 մ բարձրությամբ և 900 մ երկարությամբ Գյումրի գետակի գետնուղին, որպեսզի գետը չհեղեղվի: Այն դարձել է Գյումրիի կողուղատարը և աղբատարը. բնակիչներն աղբ են լցնում գետի մեջ, Գյումրիի ձախափնյա ամբողջ թաղամասում կոլեկտոր չկա, բոլոր կոյուղագծերով կեղտաջրերը լցվում են գետակ: Գետնուղին անցնում է Գյումրիի հին պատմական կենտրոնով, կենտրոնական հրապարակով, եկեղեցիների կողքով: Այժմ գետնուղին լցված է աղբով: Որոշ հատվածներում գետնուղու կողային պատերը քայքայվել են, բայց վերևի ծածկը փասցել է օդում կախված:

«Եթե փլուզում եղավ, քաղաքի կենտրոնական, պատմական հատվածի զգալի մասը ջրածածկ կլինի: Անհրաժեշտ է գետնուղին կապիտալ վերակառուցել, մաքրել աղբից», - ասացին բնակիչները: Նրանք նշեցին, որ Գյումրիի համայնքապետարանն իր ուժերով ի գործ չէ միայնակ խնդիրը լուծել:

Խնդրի վերաբերյալ «Էկոլուր»-ը դիմել էր ՀՀ ներքին գործերի նախարարություն: Ի պատասխան ՀՀ ներքին գործերի նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Ս. Մարգարյանը սույն թվականի հունիսի 13-ի N96/1141 նամակով հայտնել է. «Տեղեկացնում եմ, որ ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության և Գյումրու համայնքապետարանի համապատասխան մասնագետների կողմից իրականացվել են քաղաքի կենտրոնական հատվածով անցնող Գյումրի գետակի երկայնքով՝ Ռուսթավելի փողոցի 1-ին նրբանցքից մինչև Աբովյան փողոցի վերջնամասի ակնադիտական ուսումնասիրություններ: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ վերոնշյալ գետակը, որն օգտագործվում է նաև որպես կոյուղի, լցված է կենցաղային աղբով, իսկ Սուրբ Նշան եկեղեցու հարևանությամբ գետակն անցնում է փակ

հատվածով և առկա են ծածկի կիսաքանդ հատվածներ: Քաղաքի Արուվյան փողոցի վերջնամասով անցնող գետակը, որպես սելավատար, անցնում է բաց հատվածով, որը նույնպես լցված է կենցաղային աղբով:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությունը դիմել է Ջրային կոմիտեի հարցին առաջնահերթ լուծում տալու նպատակով»:



ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեն պատասխանել է Գյումրի գետակի գետնուղու վթարային վիճակի մասին ԷկոԼուրի նամակին: Ջրային կոմիտեի նախագահի տեղակալ Վարազդատ Մկրտչյանի N 02.1/07/3315-2024 նամակում նշված է. «Ի պատասխան Ձեր 2024 թվականի հունիսի 27-ի գրության՝ Գյումրի գետակի աղբոտման և ծածկի վաասվածության հետ կապված, հայտնում ենք, որ ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի կողմից 2024 թվականին իրականացվող հակահեղեղային միջոցառումների ցանկում նշված գետակի աշխատանքները ներառված չեն, սակայն, հաշվի առնելով հարցի կարևորությունը, համապատասխան ուսումնասիրություններից և գնահատումներից հետո այն կդիտարկվի առաջիկա ծրագրերում: Միաժամանակ հայտնում ենք, որ Գյումրի գետակը կենցաղային աղբից մաքրելու հարցը չի գտնվում ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի լիազորությունների շրջանակներում»:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒԹՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՀ կրթության նախարարության համակարգում
ՀՀ կրթության նախարարության համակարգում
ՀՀ կրթության նախարարության համակարգում
N 021/07/3315 2024

«ԷԿՈԼՈԳԻՆ» ՏԵԼԵՎԻԶԻՍՏԱԿԱՆ
ՀԻՎ ԵՎ ՆԱԽԱԳԱՀ Ի. ՉԱՐՄԱՆՅԱՆԻՆ
Լ. ՎԻՍՈՒՆՆԻՆՆԻՆ
Էլ. փոստ՝ ecologpressclub@gmail.com

Հարգելի տիկին **Շարսվիգյան**,

Ի պատասխան Ձեր 2024 թվականի **հունիսի 27**-ի զրույցանոց Գյումրի գետակի **արցունակ** և ծանկ վնասվածության հետ կապված **հարցերով** ենք, որ ՀՀ ՏԿԵՆ ցրային կոմիտեի կողմից 2024 թվականին իրականացվող **Էկոլոգիայի միջոցառումների** ցանկում նշված **գետակի** աշխատանքները ներառված չեն, սակայն **հաշվի** առնելով **հարցի կարևորությունը**, սակայն **հաշվի** առնելով **հարցի կարևորությունը**, համապատասխան ուսումնասիրություններից և **գնահատականներից** հետո այն կոխարկվի առաջիկա ծրագրերում:

Միաժամանակ **հայտնում** ենք, որ Գյումրի **գետակը** կենցաղային արդի մարդկային **հարց** չի գտնվում ՀՀ ՏԿԵՆ ցրային կոմիտեի լիազորությունների շրջանակներում:

X _____

ՀԱՐՊԱԼՔՈՒՄ

ՎԱՐԱՉՐԱՍ ՄԿՐՏՅԱՆ

Եզրակացություն

Գյումրիում մշտադիտարկվում է միայն Ախուրյան գետի ջրի որակը, որն ունի 5-րդ դասի ամենաբարձր աղտոտվածություն: Գյումրու, Դոր-Դոբիի և Չերքեզի ձորի գետերը չեն մշտադիտարկվում: Գյումրի գետը վերածվել է կոյուղատարի և աղբատարի: Գյումրի գետի գետնուղին վթարային վիճակում է և հրատապ միջամտության կարիք կա աղետից խուսափելու համար: Գյումրու քաղաքապետարանը «Էկոլոգի» հարցման պատասխանում տեղեկատվություն չի ներկայացրել Գյումրու ջրամատակարարման ցանցի ԱՏՀ-ի (GIS) նախապատրաստման, ջրամատակարարման և ջրի պահանջարկի վերաբերյալ բարելավված տվյալների և վերլուծության, արտահոսքի նվազեցման գործողությունների ծրագրի իրականացման համար իրավական և ֆինանսական մեխանիզմների մշակման, կեղտաջրերի ենթակառուցվածքի գույքագրման և ԱՏՀ-ի վերաբերյալ: Գյումրին դեռ շատ անելիքներ ունի ԿՔԳԾ-ով սահմանված թիրախներին հասնելու համար:

ԳՅՈՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԵՐԸ ԿՔԳԾ-ՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 2020-2025ԹԹ. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՏՐԱՆՄՈՐՏ ՈԼՈՐՏ

Գործողություն:

- Նոր հանրային տրանսպորտի ցանցի օպերատորի մոդել, ավտոբուսային հավաքակազմի արդիականացում և միասնական սակագնային ու տոմսային համակարգ

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Հավաքակազմն արդիականացվել է 89 նոր միկրոավտոբուսներով: Եվրամիության

միջոցներով իրականացվող «ԿԿԿ դաշինք» ծրագրի շրջանակներում ընթացքի մեջ է միասնական տոմսային համակարգի ներդրումը:

Գործողություն:

- Ավտոբուսային կանգառների ենթակառուցվածքի արդիականացում, այդ թվում՝ իրական ժամանակում ուղևորներին տրամադրվող տեղեկատվության (ԻԺՈՒՏ) (RTPI) համակարգի ներդրումը

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Տեղադրվել է 57 նոր սմարթ կանգառ՝ հագեցված ֆոտովոլտային պանելներով, որոնք ապահովում են կանգառների լուսավորությունը և դրանցում տեղադրված էլ.սարքերի լիցքավորման վարդակների սնուցումը: ԻԺՈՒՏ համակարգի ներդրումն ընթացքի մեջ է:

Գործողություն:

- Նոր հեծանվային ուղիների և հեծանվային կայանատեղի ենթակառուցվածք

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Նախատեսվում է քաղաքում զարգացնել հեծանվային վազքուղիների ցանցը, կկառուցվեն հեծանվային վազքուղիներ Գործարանային փողոցով մինչև Մուշ թաղամաս՝ Մինաս Ավետիսյանի երկայնքով միանալով և շարունակվելով թիվ 15 փողոցի երկայնքով և Բարեկամության այգու մոտ: Նախատեսվում է «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրով նախատեսվող Անի թաղամասի հիմնանորոգման ընթացքում կառուցել հեծանվային հրապարակ:

Գործողություն:

- Հետիոտնի համար նախատեսված ճանապարհային կողմնորոշիչ նշանների համաքաղաքային ցանց

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Քաղաքի բոլոր ասֆալտապատ փողոցները մշտապես վերահսկվում և կահավորվում են ճանապարհային երթևեկության անհրաժեշտ նշաններով:

Գործողություն:

- Քայլելուն և հեծանվավազքին նվիրված գովազդային արշավներ

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Այլընտրանքային տրանսպորտի կիրառման հանրայնացման հետ կապված քննարկումներ:

Գործողություն:

- Կայուն քաղաքային շարժունակության ծրագիր (ԿՔՇՕ) Գյումրու համար:

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Նախատեսվում է առաջիկայում պատվիրել և ձեռք բերել «Գյումրու քաղաքային

ճանապարհներ» ծրագրի բաղադրիչ հանդիսացող «Գյումրի քաղաքի շարժականության ակտիվների կառավարման և բարելավման պլան»-ը, դրա իրագործման ապահովման նպատակով ներդրվող ծրագրաշարային գործիքով:

Գործողություն:

- Տվյալների հավաքագրման համաքաղաքային ծրագիր և տրանսպորտային մոդել

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի բաղադրիչ հանդիսացող «Գյումրի քաղաքի շարժականության ակտիվների կառավարման և բարելավման պլան»-ի գործադրմամբ: Տվյալների հավաքագրում իրականացվում է նաև վիճակագրական վարչության կողմից:

Գործողություն:

- Հանրային ավտոբուսների հանրակազմի արդիականացում՝ արտանետումների նվազեցված մակարդակով տրանսպորտային միջոցների համալրմամբ:

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- «ԿԿԿ դաշինք» ծրագրի շրջանակներում ձեռք կբերվեն և հանրային տրասպորտի ցանցում կշահագործվեն թվով 5 էլ. ավտոբուսներ: Քննարկումների փուլում է նաև ՎԶԵԲ միջոցներով 50 էլ. ավտոբուսների ձեռքբերման ծրագիրը:

ՇԵՆՔԵՐ, ԷՆԵՐԳԱՄԱՏԱՍԿԱՐԱՐՈՒՄ և ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ 10 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Գործողություն:

- Էներգաարդյունավետության մասին իրազեկում և տեղեկատվության տարածում բնակելի հատվածում

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- USAID-ի հետ համատեղ մշակվել և հանրային լուսամների ժամանակ քննարկվել են համապատասխան զեկույցներ:

Գործողություն:

Ցածր եկամուտ ունեցող սպառողների լուսատուները ԼԵԴ լամպերով փոխարինելու արշավ

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Համայնքապատկան հիմնարկների և քաղաքի փողոցային լուսավորության գրեթե 80% փոխարինվել է LED լուսատուներով:

Գործողություն:

- Բնակելի շենքերի ջերմային արդիականացման պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ծրագիր

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

Անի և Մուշ թաղամասերում սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացվել է 3 բնակելի շենքերի ջերմամեկուսացման գործընթաց, ևս 3-ը նախատեսվում է ջերմամեկուսացնել 2025թ.-ին: Գործընթացի իրականացման արդյունքների գնահատումից հետո այն կարող է ներդրվել ողջ Անի թաղամասում, որտեղ բնակելի շենքերի ֆոնդը կառուցված է մոնոլիտ բետոնից:

Գործողություն:

-Համայնքային էներգետիկ տեղեկատվական համակարգ և էներգակառավարում

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Պաշտոնապես դեռևս ստեղծված չէ, սակայն արվում են ակտիվ քայլեր այդ ուղղությամբ: 2024թ.-ին նախատեսվում է բացել համայնքապետարանի էներգակառավարման բաժին, ինչի առթիվ արդեն դիմել ենք ՀՀ կառավարություն:

Գործողություն:

-Էներգախնայողության կատարողականի պայմանագրերի (ԷԿՊ) և էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերությունների (ԷԾՄԸ) հետ պայմանագրերի կնքում

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

-2023թ.-ին ՀԷՑ ընկերության հետ կնքվել է համայնքում արտադրված այլընտրանքային (արևային) էներգիայի ավելցուկների համակարգված տեղափոխության մասին համաձայնագիր:

Գործողություն:

-Հանրային շենքերի ջերմային արդիականացման ծրագիր

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.
Պատասխան առկա չէ:

Գործողություն:

-Հանրային գնումներում էներգաարդյունավետ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման հայեցակարգային փաստաթղթի մշակում

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

-Նման փաստաթղթեր մշակվել են լուսատուների ձեռքբերման նպատակով:

Գործողություն:

-«Կանաչ» շենքերի խրախուսում

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.
Պատասխան առկա չէ:

Գործողություն:

-Քաղաքի փողոցային լուսավորության էներգաարդյունավետ արդիականացում

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

-«Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի շրջանակներում տեղադրվել են սմարթ տեսակի լուսավորության համակարգի կառավարման վահանակներ՝ հազեցված հեռակառավարման և դիմիտրի (մզեցման) համակարգերով: Նմանատիպ համակարգ շուրջ 1300 LED տեղադրմամբ նախատեսվում է գործարկել Անի և Ավստրիական թաղամասերում: Տեղադրվել են 2000 նոր LED լուսատուներ սուբվենցիոն և 300՝ համայնքի միջոցների հաշվին:

Գործողություն:

-Վերականգնվող էներգիայի միջին և խոշոր համակարգերի (ՎԷՀ) ներդրում

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

-2022թ. սուբվենցիոն ծրագրով տեղադրվել է 1.8 ՄՎտ դրվածքային հզորությամբ ֆոտովոլտային կայաններ թվով 52 համայնքապատկան հիմնարկների վրա, որոնց արտադրած էլեկտրաէներգիան օգտագործվում է ՀՈԱԿ-ների և քաղաքի արտաքին լուսավորության ցանցի սնուցման համար, արդյունքում զգալիորեն նվազեցնելով ջերմոցային գազերի արտանետման ծավալները մթնոլորտ: Մշակվում են ավելի շատ փոտովոլտային կայանների տեղադրման ծրագրեր: Վերականգնվող էներգիայի մասին նախագիծ է մշակվել, հաստատվել ավագանու կողմից և իրագործվում է USAID-ի հետ համատեղ:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Գործողություններ

- Աղտոտված արդյունաբերական տարածքների հետազոտում և ռիսկերի նվազեցում
- Էներգիայի կառավարման համակարգի աջակցության տրամադրում արդյունաբերական ոլորտին/ ՓՄՁ-ներին
- Նախկին արդյունաբերական տարածքների առողջացում՝ քաղաքային միջավայրի վերականգնման համար

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

Պատասխան առկա չէ:

ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐ

Գործողություն:

-Ապօրինի բաց աղբավայրերի վերացում և աղտոտված տարածքների վերականգնում, գործող աղբավայրի պատշաճ կառավարում:

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Քաղաքում ապօրինի բաց աղբավայրեր չկան: Քաղաքային աղբավայրում

պարբերաբար կատարվում են հողահարթեցման աշխատանքներ, արդյունքում նվազեցնելով CO₂-ի արտանետումը: Աղբավայրը գտնվում է բնակելի տարածքներին շատ մոտ, մինչդեռ տարածքի մաքրությունն ապահովելն անընդհատ իրականացվող գործընթաց է, սակայն աղբավայրը փակման ենթակա է, հարցը դիտարկման առարկա է ՀՀ կառավարության համար: Սակայն միջոցներ չկան նոր աղբավայրի ստեղծման համար:

Գործողություն:

-Թափոնների հավաքման և դրանց գործող վճարային համակարգերի վերանայում ու վերամշակելի նյութերի հավաքման առանձին համակարգի գործարկում:

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

-«ԿԿԿ դաշինք» ծրագրի շրջանակներում նախատեսվում է պլաստիկի առանձին հավաքման և դրա վերամշակման արդյունքում սալիկների արտադրության հոսքագծի գործարկում: Տեղադրված են պլաստիկի հավաքման առանձին աղբարկղեր:

Գործողություն:

-Քաղաքային կոշտ թափոնների հեռացման և վերամշակման նոր ենթակառուցվածքի հիմնում

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

-Քննարկվում է նոր աղբավայրի կառուցումը:

Գործողություն:

-ՔԿԹ մորֆոլոգիայի ուսումնասիրություն և վերամշակման ենթակա նյութերի շուկայական հետազոտություն և թափոնների որակին առնչվող արձանագրությունների մշակում

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

Պատասխան առկա չէ:

Գործողություն:

- Իրականացնել թափոնների կառավարման իրազեկման պարբերական արշավները

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Իրազեկում զանգվածային լրատվության միջոցով, համայնքի և «ԿԿԿ դաշինք» ծրագրի կողմից:

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Գործողություն:

Գյումրու ջրամատակարարման ցանցի ենթակառուցվածքի և ակտիվների համար գույքագրման և USZ-ի (GIS) նախապատրաստում

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Գույքագրումն իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից:

Գործողություն:

- Ջրամատակարարման և ջրի պահանջարկի վերաբերյալ բարելավված տվյալներ և վերլուծություն

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

Պատասխան առկա չէ:

Գործողություն:

- Արտահոսքի նվազեցման գործողությունների ծրագրի (ԱՆԳԾ) մշակում

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից իրականացվել և իրականացվում է ջրամատակարարման ցանցի արդիականացում, ինչի արդյունքում զգալիորեն նվազել է ջրի արտահոսքը:

Գործողություն:

- ԱՆԳԾ-ի իրականացման համար իրավական և ֆինանսական մեխանիզմների մշակում

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

Պատասխան առկա չէ:

Գործողություն:

- Մատակարարման համակարգի՝ արտահոսքի ամենաբարձր մակարդակ ունեցող մասերի նորոգում և վերականգնում

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Համայնքի վերահսկողության ներքո, «Վեոլիա ջրի» կողմից քաղաքի մի շարք թաղամասերում ջրամատակարարման ցանցը նորացվել է:

Գործողություն:

- Պատրաստել գույքագրում և USZ (GIS) կեղտաջրերի ենթակառուցվածքի համար

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

Պատասխան առկա չէ:

Գործողություն:

- Կեղտաջրերի վերաբերյալ գործողություն-ների ծրագրի և մրցութային փաստաթղթերի կազմում ենթակառուցվածքի առաջարկվող արդիականացման համար:

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Իրականացվում է պետական մակարդակով:

Գործողություն:

- Ջրհեռ համակարգերի վերականգնում և ընդլայնում

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Բոլոր նորոգվող փողոցներում կառուցվում կամ նորոգվում է ջրահեռացման համակարգը:

Գործողություն:

- Կեղտաջրերի մաքրման համակարգի վերականգնում և ընդլայնում:

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Քննարկվում է Գյումրի գետակի կողտաջրերից մաքրման նախագիծ Ուրբան ինստիտուտի հետ: Իրականացվում է պետական մակարդակով:

Գործողություն:

- Կանաչ տարածքներում հանրային օգտագործման ջրի ենթակառուցվածքի արդիականացում»

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Քաղաքի տարբեր թաղամասերում իրականացվել է ոռոգման համակարգի և հանրային օգտագործման ջրի ենթակառուցվածքի արդիականացում: Նախատեսվում է արտեզյան ջրերի օգտագործումը ոռոգման ցանցում:

ՀՈՂՕՔՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործողություն:

- Մշակել կայուն քաղաքային պլանավորման չափանիշներ Գյումրի քաղաքի համար և մշակել նորացված գլխավոր հատակագիծ և գոտևորման կանոնակարգեր

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Մշակված է, ընթացքի մեջ, թարմացվում է:

Գործողություն:

- Մշակել ԱՏՀ-ի վրա հիմնված հողօգտագործման տվյալների բազա և քաղաքի տեղեկատվական մոդել (ՔՏՄ) Գյումրու համար

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Նախատեսվում է հիմնել ԱՏՀ (GIS) համակարգ «ԿԿԿ դաշինք» ծրագրի շրջանակներում, քննարկման փուլում է այս առնչությամբ բարձրացված հարցը:

Գործողություն:

- Ստեղծել նպատակային քաղաքային պլանավորման ուղեցույց և գործիքներ

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

Պատասխան առկա չէ:

Գործողություն:

- Գործարկել քաղաքային պլանավորումը և շինարարականկանոնակարգերը

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Գործարկվում են:

Գործողություն:

- Քաղաքային պլանավորում և կայուն զարգացում, հանրային հատվածի ներուժի ստեղծում

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

Պատասխան առկա չէ:

Գործողություն:

- Հանրային զբոսայգիների և կանաչ տարածքների կառավարման ռազմավարություն

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Պարբերական քննարկումների փուլում, դիտարկվում են դրա մշակման և գործադրման ասպեկտներ:

Գործողություն:

- Կանաչ ենթակառուցվածքի, զբոսայգիների և բաց տարածքների ապահովում

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Իրականացվում է թե՛ համայնքի և թե՛ բազմազան կազմակերպությունների միջոցների հաշվին: Հիմնվել և հիմնվում են անտառաշերտեր և զբոսայգիներ:

ՄԻՋՈՒՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործողություն:

-Մշակել համայնքի օդի որակի վերահսկման համակարգ

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

Պատասխան առկա չէ:

Գործողություն:

- Իրականացնել կլիմայի ռիսկի գնահատում ջրի, տրանսպորտի, կոշտ թափոնների և շինարարության, էներգիայի և լուսավորության ոլորտների ենթակառուցվածքների համար

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

Պատասխան առկա չէ:

Գործողություն:

- Նախապատրաստել կլիմայի նկատմամբ Գյումրու ենթակառուցվածքի դիմակայության բարձրացման գործողությունների ծրագիր

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Մշակվել է նախագիծ, հաստատվել համայնքի ավագանու կողմից, որով նախատեսվում է մինչև 2030թ.-ը էականորեն նվազեցնել CO₂-ի արտանետումը:

Գործողություն:

- Մշակել արտակարգ իրավիճակներին պատրաստվածության գործողությունների ծրագիր

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

- Պատասխան առկա չէ:

Գործողություն:

- Ներդրումներ կլիմայի փոփոխության հարմարվողականության և դիմակայության միջոցառումների համար:

Գյումրիի քաղաքապետարանի պատասխան.

Պատասխան առկա չէ: